

«Հաստատում են»

Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի  
նախագահ



## Կ ա ն ո ն ա կ ա ղ

7-րդ Հ ամահայկական խաղերի բասկետբոլի առաջնության

### 1. Ա Ն Ց Կ Ա Ց Մ Ա Ն Ժ Ա Մ Կ Ե Տ Ր Ե Վ Վ Ա Յ Ր Ը

Խաղերը կանցկացվեն 2019թ. օգոստոսի 6-17-ը «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոնի», «Գրանդ սպորտ», Հայ-Ռուսական սլավոնական համալսարանի և Երևանի պետական համալսարանի մարզադահլիճներում:

### 2. Թ ի մ եր ի կ ա զ մ ը

Թիմի կազմը՝ 15 մարդ, այդ թվում 12 մասնակից և 3 պատասխանատու անձ:

### 3. Ա ն գ կ ա գ մ ա ն կ ա ղ զ

Բասկետբոլի մրցաշարը կանցկացվի համաձայն բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի գործող կանոնների:

Ցանկացած քանակի թիմերի մասնակցության դեպքում նախորդ Համահայկական խաղերում 1-8 տեղերը գրաված կանանց և տղամարդկանց թիմերը (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում հաջորդաբար 9, 10-րդ տեղերը գրաված թիմերը) առանձին և մյուս մասնակից թիմերը խառը վիճակահանությանը կբաժանվեն խմբերի, ընդ որում նույն երկիրը ներկայացնող տարբեր քաղաքների թիմերը կընդգրկվեն տարբեր խմբերում:

Կախված խմբերի քանակից, նրանցում 1-ին, 2-րդ, հնարավոր է նաև 3-րդ տեղ գրաված 8 թիմերին, ինչպես նաև 3-րդ, 4-րդ, հնարավոր է նաև 5-րդ տեղերը գրաված 8 թիմերին իրավունք է տրվում հանդես գալու եզրափակիչ փուլում, որում օլիմպիական եղանակով կխաղարկվեն 1-8-րդ և 9-16-րդ տեղերը՝ համաձայն Համահայկական խաղերի կանոնակարգի 2-րդ հավելվածի:

Ենթախմբերում թիմերի գրաված տեղը որոշվում է վաստակած միավորների առավելագույն գումարով:

Հաղթանակի համար տրվում է՝ 2, պարտության դեպքում՝ 1, խաղին չներկայանալու կամ խաղից գրկվելու դեպքում՝ 0 միավոր, 0:20 հաշվով:

Թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը հետևյալ հերթականությամբ տրվում է՝

✓ այդ թիմերի միջև կայացած հանդիպումներում առավել թվով հաղթանակներ ունեցող թիմին;

✓ այդ թիմերի միջև կայացած հանդիպումներում նետած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն ունեցող թիմին;

✓ բոլոր հանդիպումներում առավել թվով հաղթանակներ ունեցող թիմին;

✓ բոլոր հանդիպումներում նետած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն ունեցող թիմին:

Մարզիկների առողջական խնդիրների և ստացված վնասվածքների հետևանքների համար Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան պատասխանատվություն չի կրում:

ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՎԱՐ՝



Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ